«Քայլ առ քայլ»

բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Մեթոդիստ՝ Շողեր Գրիգորյան

Մանկապարտեզ՝ Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի, Քաղսի վարչական շրջանի ՆՈՒՀ «ՀՈԱԿ» մանկապարտեզ

2023 թ

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1. Ազգային տոների և ծեսերի առաջացումը----------5

1.1.Նոր Տարի (Ամանոր)----------7

1.2.Տյառնընդառաջ----------8

1.3.Բարեկենդան----------9

1.4.Ծաղկազարդ----------11

1.5.Սուրբ Զատիկ----------13

1.6.Համբարձման տոն----------14

1.7.Պայծառակերպության տոն----------15

ԳԼՈՒԽ 2. Տոների և ծեսերի կազմակերպումը----------16

2.1.Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները----------16

2.2.Հետազոտական աշխատանք----------17

Եզրակացություն----------21

Գրականության ցանկ----------22

Որքան մարդ կրթված լինի, այնքան նա ավելի
օգտակար կլինի Հայրենիքին:

Ալեքսանդր Գրիբոյեդով

Ներածություն

Հետազոտական աշխատանքը կրում է «Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի է առնվել դրա արդիականությունը: Ժամանակակից հասարակության համար կարևորագույն խնդիրներից է ազգային նորմերի, բարոյական նկարագրի ճիշտ արժևորումը և դրանց կիրառումը նոր սերնդի դաստիարակության գործում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում մանկապարտեզ, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր գնահատող անհատների: Յուրաքանչյուր երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի հանդեպ, իսկ ժամանակի ընթացքում այս սերը պետք է մեծացնել ու ավելի իմաստավոր դարձնել: Հետազոտական աշխատանքի նպատակներից մեկն էլ ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների, դրանց օգտակարության ուսումնասիրությունն է՝ երեխաների արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման նպատակով:

Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողությունները, պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում:

Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր մշակութային արժեքների ընկալումը: Այսօր սերնդի դաստիրակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական և այլն: Հաշվի առնելով

այս բազմաթիվ հանգամանքները՝ մանկավարժության համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա:

Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը սերմանելն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր պապերից: Ազգային արժեք են, իհարկե, մեր ազգային տոներն ու ծեսերը: Դրանք առաջացել են դարերի ընթացքում և ուղեկցել են ժողովրդին երկար ժամանակ: Այդ ծեսերի, տոների մասին գիտելիքները, դրանց մասնակից դառնալը երեխայի մեջ ամրապնդում է սերը ազգային արժեքների հանդեպ, նրան հաղորդակցում անցյալի ձեռքբերումներին:

ԳԼՈՒԽ 1.ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ և ԾԵՍԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ազգային տոները հայ ժողովուրդը նշում էր դեռևս դարեր առաջ: Քրիստոնեության ընդունումից հետո, ինչպես շատ ժողովուրդների մոտ, այնպես էլ հայ ժողովրդի ավանդական տոնացույցը ևս վերաձևվեց քրիստոնեական աշխարահայացքի և համակարգված տոնացույցի կաղապարով և այդ կերպ գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Ժողովրդական և եկեղեցական տոների ամբողջությունը, հիրավի, այդ երկար ու ձիգ դարերի ընթացքում թե՛ եկեղեցին, թե՛ ժողովուրդը նշել են:

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովրդական տոնի ժամանակ ոչ թե պետք է ելույթ ունենան «բանահյուսական – ազգագրական» խմբերը, այլ տոնի բոլոր մասնակիցները պետք է ընդգրկվեն այդ «բանահյուսական- ազգագրական» կոչվող երգ ու պարի կատարման մեջ:

Ծեսը այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Երեխան քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, յուրացնում է ծեսը:

Ուրախ միջավայրում խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով: Միևնույն ժամանակ նախօրոք պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու:

Ազգային մշակույթի յուրացումը դրված է Ն/Դ ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է: Երեխան ազգային ծեսի մասին իմանում է մանկապարտեզում: Իսկ ազգային ծեսի ճանաչման ամենարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական:

Մանկապարտեզներում աշխատանքները հիմնականում իրականացվում են խաղի տեսքով: Խաղը զարգացնում է երեխայի.

- Ուշադրությունը
- Հիշողությունը
- Երևակայությունը
- Ճարժողականությունը
- Ընկալումը

- Ճոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը
- Լսելու կարողությունը
- Դիտելու և լսելու կարողությունը
- Ինքնատիրապետելու կարողությունը
- Ինքնուրույն աշխատելու կարողությունը
- Հարստացնում է բառապաշարը

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը:

Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են.

- Իրավիճակների խաղարկում
- Դերախաղ
- Խմբային աշխատանք

Խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ: Պարտադիր չէ սպասել տվյալ ծեսի օրվան և նոր խաղալ: Կարելի էր խաղալ, երբ կամենում ես: Ժողովուրդը ազգային տոներից և ծեսերից, առավել մասսայաբար, նշում է Նոր Տարին, Ս. Սարգիսը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը կամ Ս. Հարությունը, Համբարձումը, Խաղողօրհներքը, Վարդավառը և այլն:

1.1. Նոր Տարի (Ամանոր)

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր Տարվա առաջին օրը և նշել շքեղ տոնակատարությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի:

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդը 1-ը /օգոստոսի 11-ը/ և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ.թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա /նոր և սարդ/ տարի բառերից և նշանակում է Նոր տարի:

18-րդ դարում, Սիմոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը: Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը՝ որպես տարվա սկիզբ, տոնելը: Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր Տարի, Կաղանդ, Կալանտար:

Նոր Տարին սկսվում էր դեկտեմբերի 30-31-ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով: Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարին հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ» և այլ անուններով ծիսական հացն էր: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրատոմսերը, ձևը տարբեր էին: Այն կարող էր լինել գաթա, բաղար ձվաձև, կլոր, խաչձև, եռանկյուն, քառակուսի և այլն: Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով, պտուղներով: Գլխավորն այն է, որ հացի մեջ որևէ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի, կամ հուլունք, ավելի հաճախ՝ դրամ: Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալույցին, հունվարի 6-ին՝ Ծննդին: Ըստ մատենագիտական նյութերի, հնում «Տարի» հացը բաժանել են 12 մասի՝ իբրև 12 ամիսների խորհրդանշան: Բաժանել են նաև տան բոլոր անդամների թվին հավասար: Հաճախ բաժին են հանել նաև տան կենդանիներին, արտին, հանդին: Ում բաժին ընկեր նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար:

«Տարի» հացից բացի թխում էին ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն՝ արոր, գութան, խնոցի, մկրատ,մատնոց, ուրագ, և այլն, որևէ ցանկություն խորհրդանշող պատկեր՝ քսակ, պայտ, կողպեք, հասկ: Շատ տեղերում թխում էին մարդակերպ թխվածքներ, որոնք կոչվում էին «Ասիլ-Բասիլ» կամ «Ասիլ-Վասիլ»: Սրանք խորհրդանշում էին բնության մեռնող ու հարություն առնող աստվածներին՝ Նարին, Արա

Գեղեցիկին: Թխվելու ընթացքում դրանց ուռելը կամ սմքելը դրական և բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար:

Ընդհանրապես, Նոր տարվա սեղանին պարտադիր էին 7 տեսակ միրգ և 7 ճաշատեսակները: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Տան մեծը բարձրացնում էր բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների Նոր տարին և առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել. «-Անուշ մեղր ուտեք, որ տարին բոլոր անուշ զրուցենք, անուշ վարվենք»: Որոշ տեղերում ընթրիքն սկսելուց առաջ տան գլխավորը երեք բուռ կաղին, ընկույզ էր նետում դեպի տանիք:

Երեխաների սիրած խաղերից էին ընկուզախաղերը: Գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու՝ ընկույզն ընկներ մի փոսի մեջ: Հաջողվածը բոլոր գլորած ընկույզները վերցնում էր:

Որոշ տեղերում ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Նախօրոք վերցնում էին 20-25սմ երկարության թելեր, հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում եղևնիների արանքը և սոսնձում: Մի քանի այդպիսի ընկույզների թելեր կապում էին իրար, որն էլ դառնում էր «Չարխափան»: Երբ այն թափահարվում է, շրխկում է: Հենց այդ շրխկոցն էլ «վախեցնում և քշում է չարին»:

1.2. Տյառնընդառաջ

Տյառնընդառաջը կամ մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին, Հայոց եկեղեցու տոներից է: Հայոց եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14-ին՝ Քրիստոսի աստվածահայտնությունից / հունվարի 6/ քառասուն օր հետո:

Տյառնընդառաջ նշանակում է «Ելնել տիրոջ ընդառաջ», տարածված է նաև Տերընդեզ, Տըրընդեզ, որոնք ծագել են «Տերն ընդ ձեզ» անվանումից: Հայոց Եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին՝ երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնական: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Սովորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի 4 ծեգերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության

արարողությունը: Եկեղեցու վերցրած կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Հնում ծնողներն առաջնեկ տղա երեխային քառասուն օրեկանում տանում էին տաճար: Հովսեփն ու Մարիամը մանուկ Հիսուսին նույնպես տանում են տաճար:

Ըստ հին հրեական կրոնի, տղաբերքից քառասուն օր անց մայրը պարտավոր էր այցելել տաճար՝ զոհ մատուցելու, «սրբազան» հրով ու ջրով սրբվելու և նորածնին օրհնելու համար: Կրոնական ավանդության համաձայն՝ Տիրամայր Մարիամը ծիսական այդ արարողությունը կատարել է որդու ծննդյան օրից՝ հունվարի 6-ից / հուն. և լատին., եկեղեցիներում՝ դեկտեմբերի 25-ից/ 40 օր անց՝ փետերվարի 14-ին /հուն և լատին, եկեղեցիներում՝ փետերվարի 2-ին/: Սիմոն անունով մի ազնիվ ու արդար մարդ, Հիսուսին տեսնելով, հասկանում է, որ նա փրկություն ու լույս կլինի մարդկանց համար և ընդառաջ է գալիս նրանց: Այստեղից էլ առաջանում է Տյառնընդառաջը, և նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն:

Այդ օրը կոչվում է «Քառասնօրյա գալուստ Քրիստոսի տաճար». հավատացյալներն «ընդառաջ են ելնում Տիրոջը» /որից էլ՝ «Տյառնընդառաջ» անվանումը:

Տյառնընդառաջի մեջ պահպանվել են հինավուրց՝ նախաքրիստոնեական մաքրագործական, հատկապես հրապաշտական ծեսեր: Այդ օրը եկեղեցիների ու տների բակերում, տանիքներին, փողոցներում վառվում են խարյուկներ, երգելով ու աղոթելով պտտվում են դրանց շուրջը, նորապսակ հարսներին թոցնում են բոցերի վրայով / իբր մաքրագործվելու և ծնունդ նվիրագործելու համար/, ամուլ կանայք «սուրբ» կրակով այրում են իրենց զգեստի փեշերը ամոքվելու հույսով: Խարյուկների մոխիրը երդիկներից շաղ են տալիս տների ու գոմերի մեջ, ինչպես նաև տնամերձ հողերին՝ մաղթելով տարվա առատություն, արգասավորություն, «տեր ընձ ձեզ», որից էլ տոնի «Տրնդեզ» ժողովրդական անվանումը:

1.3 Բարեկենդան

Մեր ազգային տոներից է Բարեկենդանը: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ: Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետերվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին

զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով: Բարեկենդանն այնքան սիրված, և սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենազգային, ինչպես նաև ամենաերջանկաբեր խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում: Նախապատվությունը տրվում էր մսեղենին, կաթնեղենին, յուղի առատությանը: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստվում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստվում էին մեծ քանակությամբ գաթա և հալվա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Պատրաստում էին փաթիլա բխբխիկ: Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր փորը ձավարով ու զանազան համեմուքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին կամ տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և երկու շաբաթ պատրաստվում բոլոր տներում: Տանտիկիններն իրենց պահած մթերքներով շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: Վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածուն էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով, բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելուն,- ակնկալելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Զատիկ: Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի ուրախությանը: ՈՒրախ պարերը Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին: Պարերը սկսվում էին առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում՝ ինչպես կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով: Հատկապես վերջին շաբաթը-կիրակի օրերին դրանք դառնում էին համընդհանուր, համազյուղական, համաթաղական: Պարում էին ինչպես զուռնա-դհոլի նվագի տակ, այնպես էլ պարերգերի:

1.4 Ծաղկազարդ

Ծաղկազարդը գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է, որին հաջորդում է Ավագ շաբաթը:

Կատարվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»: Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ: Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն: Հավատալով, որ դրանցով կավելանա յուղը, կբարձրանա կաթնատվությունը, ձվատվությունը, դրանք դրվել են խնոցում, մսուրքում և այլն: Անդաստանի արարողությամբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը, մասնավորապես Հայոց Հայրապետությունը, հայրենիքը, քաղաքներն ու գյուղերն իրենց բնակիչներով, վանքերը, արտերը և տարվա պտղաբերությունը: Այն տարվա մեջ կատարվում է 25 անգամ:

Ծաղկազարդի երեկոյան կատարվում է Դռնբացեքի արարողությունը, որի ընթացքում, «**Բաց մեզ, Տէր զդուռն ողորմութեան»** շարականի ներքո բացվում են եկեղեցիների խորանների վարագույրները՝ խորհրդանշելով Տիրոջ երկրորդ գալուստը, աշխարհի վախճանը և Վերջին դատաստանը: Ժամանակին այս արարողությունը կատարվել է եկեղեցու փակ դռան առջև: Տոնի հիմքում ընկած **է Կենաց ծառի** գաղափարը: Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերություն: Դրա բարձրագույն նպատակը անմահությունն է: Տիեզերական կամ Կենաց ծառի գաղափարն է ունեցել նաև Ամանորի տոնածառն ու խնդումը: Ամանորին ծառը զարդարել են չրերով ու մրգերով, իսկ Ծաղկազարդին՝ փնջած ձվերով, որոնք ունեցել են նաև չարխափան նշանակություն: Ծաղկազարդին ընդունված է եղել ծառերը զարդարել գունավոր լաթերով: Այդ պատճառով է, որ տոնը ստացել է Ծաղկազարդ անվանումը: Հետագայում ծառի պաշտամունքը շարունակվեց նաև քրիստոնեական շրջանում: Սրա ապացույցը են «Տաճարի մայրիի» /անտառի տաճար/ անունը ստացավ եկեղեցին Խոսրովի արգելոցում:

Քրիստոնեության ընդունումից հետո տոնը հարմարեցվել է քրիստոնեության գաղափարախոսությանը և նշվել որպես Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելու օր, երբ նրան դիմավորել են ձիթենու կանաչ ոստերով, ինչը նկարագրում են բոլոր ավետարանիչները:

Նորապսակ երիտասարդները և նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին արմատախիլ էին անում բողբոջած ուռենիները և բերում տուն: Եկեղեցին ևս զարդարում էին ուռենու ճյուղերով, իսկ եկեղեցու բակում՝ ճյուղերից մի մեծ կույտ էին շինում: Այդ օրը

աղջիկները եկեղեցի էին գալիս նույն օրը հավաքած ծաղիկներով: Մարդիկ, մոմերը ձեռքերին, խմբվում էին եկեղեցու բակում, և կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը:

Հաճախ Ծաղկազարդի օրը՝ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ տեղի էր ունենում հանպատրաստի նշանադրություն: Փեսացուի մայրը, նախապես համաձայնեցված լինելով հարսնացուի մոր հետ, վերցնում էր ուռենու ճյուղի վրա տեղադրված մոմերից մեկը, վառում այն, վրան հագցնում նշանդրեքի մատանին և հանձնում հարսնացուին: Հարսնացուն ընդունում էր մատանին և համարվում է նշանված:

Ժամասացության ավարտից հետո ժամավորները ջանում էին հնարավորինս շատ օրհնված ուռենու ճյուղեր տուն տանել, քանի որ ճյուղերին վերագրվում էր չարխափան և առատացնող զորություն, և դրանք օգտագործում էին տարբեր առիթներով՝ մինչև հաջորդ Ծաղկազարդը: Ճյուղերը նաև գցում էին կարասներն ու ամբարները, թեթևակի հարվածում անասուններին: Ճյուղերից մեկն օգտագործում էին խնոցու համար՝ ստուգելու համար կարագի պնդությունը: Ճյուղերից հյուսում էին պսակներ և դրանց միջով անցկացնում հավերին, որպեսզի դրանք գեր լինեին: Երբեմն կանայք վառված մոմերը դուրս էին բերում եկեղեցուց և տանում գերեզմանատուն՝ տեղադրելով դրանք հանգուցյալների շիրիմներին:

Ծաղկազարդին պատրաստել են տիկնիկներ, որոնք կապված են եղել անձրևի և երաշտի հետ: Դրանք տարբեր ազգագավառներում ունեցել են տարբեր անվանումներ՝ Նուրի, Թերափ, Չիչի-մամա, Չամչա խաթուն, Մամա չթթիկ և այլն: Նուրին հայտնվում է Ծաղկազարդի տոնին և երաշտի ժամանակ: Նուրիի աչքերից էին ծնվում շաղը, ցողն ու անձրևի կաթիլները: Երբ մարդ ու անասուն տառապում էին ջրի սակավությունից, Նուրին արտասվում էր, և նրա արցունքներով թրջված հողը վերակենդանանում էր, կրկին բերք տալիս:

Նուրի տիկնիկը պատրաստվում էր ցախավելից կամ փայտից: Դեմքը պատրաստում էին սպիտակ լաթից, գոտին՝ գունավոր կտորից, լաչակը փայփլուն ուլունքներից, իսկ գլխին ամրացնում էր ծաղկեպսակ:

Երբ Նուրի տիկնիկին պտտեցնում էին հրապարակներով ու թաղերով, մարդիկ լուսամուտներից ու դռներից կուժերով ջուր էին շաղ տալիս թափորի վրա, իսկ թափորի մասնակիցներին նվերներ ընծայում: Հավաքված բարիքով երիտասարդները կամ խնջույք էին կազմակերպում, կամ էլ պատվիրում էին դարբնին մի մետաղական տիկնիկ պատրաստել, որը թողնում էին գյուղի սրբավայրում:

Նուրի տիկնիկի ծեսը տոնի ամենակարևոր բաղադրիչներից էր:

Երիտասարդների շրջայցներն ու երգերը ուղեկցվում էին Ծաղկազարդին բնորոշ խաղերով: Շատ տարածված էր հետևյալ խաղը. 10-12 տարեկան տղաները հավաքում էին

բարդու կամ ուռենու ճյուղերը և դրանք կարմիր գույնով ներկում: Խաղացողներից մեկը իր ճյուղը շեղակի դեմ էր տալիս պատին, իսկ մյուսը հարվածում էր դրան իր ճյուղով: Կոտրված ճյուղը հաղթողին էր բաժին ընկնում: Կոտրված ճյուղերը պահում էին և այրում Զատիկի թոնրապուրի տակ:

Ծաղկազարդին դեռևս պահքը չէր վերջացել, ուստի ուտում էին միայն պասային կերակուրներ: Տոնին ընդառաջ աղջիկները դաշտ կամ սար էին գնում՝ կանաչի հավաքելու: Տոնին անպայման ուտում էին նոր դուրս եկած կանաչեղեն:

Հում կանաչեղենից օգտագործում էին հիմնականում դաղձը: Երբեմն եփած կանաչեղենը տանում էին եկեղեցի և իբրև մատաղ՝ բաժանում ժողովրդին: Ծաղկազարդին եփել են նաև եղինջ, որովհետև հավատացել են, որ Քրիստոսին հենց եղինջով են ծեծել:

Տարածված ուտեստներից են եղել նաև եղինջը, քացախով համեմված ոսպապուրը, օձի թթուն, աղամաղը /սմբուկի գլխիկի կանաչ կեղևն է, որ չորացնում ու պահում էին այդ օրվա համար/: Ավագ հինգշաբթի օրը այն խաշում էին, մանրացնում, սոխ կտրատում, համեմում աղով ու պղպեղով: Ծաղկազարդին պատրաստել են հատիկ կոչվող աղանդերը: Այն պատրաստվում էր ցորենից, սիսեռից, չամիչից և շաքարահատիկներից:

1.5. Սուրբ Զատիկ

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Զատիկ անվանումը առաջացել է **զատել** բառից, որը նշանակում է զատել և հեռանալ մեղքերից:Այն համարվում է եկեղեցական 5 տաղավար տոներից մեկը, և այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը՝ «Քրիստոսի հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Սակայն հայոց աշխարհում զատիկի տոնի արմատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը: Զատիկն այստեղ կրկին ծագում էր զատել բառից, քանի որ հենց Անահիտն էր, որ միմյանցից զատում էր բնության գույները: Ըստ ավանդության, երբ ջրհեղեղից հետո արացիները բնակություն հաստատեցին Արարատյան դաշտում, նրանք նկատեցին, որ ծիլ ու ծաղկունք ամբողջությամբ գորշությամբ են պատված:

Եվ Արիների նահապետը՝ Մանը, զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհուն՝ խնդրելով նրան, որպեսզի վանի զորշությունն ու իրենց վերադարձնի բնության հազարավոր գույները: Սակայն Անահիտը պատասխանում է, որ բնության գույները կարող է վերադառձնել միայն Հազարան հավքը, որը դյութիչ ձայնով երգում է և գույնզգույն ձվեր ածում, որով և նորոգվում են բնության գույները: Բայց այժմ հավքը պահվում է ստորգետնյա թագավորությունում, և Մանը պետք է ազատի և վերադարձնի նրան:

Մանը վերադառնում է Արարատ՝ Հազարան հավքի հետ: Նա հավքին դնում է գետնին, և հավքը սկսում է երգել՝ բազմաթիվ գույներ ճառագելով և գույնզգույն ձվեր ածելով: Այնուհետև Անահիտը, գալով Արարատ, հավաքում է գույնզգույն ձվերը և շաղ տալիս ողջ դաշտով մեկ: Իսկ այնուհետև պատվիրում է հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա:

Եվ այդ օրվանից Արիները սկսվում են ուրախ վարել և ցանել հողը, իսկ մանուկները, ջահել հարսներն ու աղջիկները մինչև ուշ երեկո երգում, պարում ու ձվախաղ են խաղում:

Ի տարբերություն քրիստոնյաների, ովքեր զատկի ձվերը ներկում են մուգ կարմիր գույնով /Քրիստոսի թափած արյան գույնը/, Արիացիները զատիկի ձվերը ներկում էին բոլոր հնարավոր գույներով: Նրանց համար զատկի տոնի իմաստը կյանքի վերածնունդը և բնության գարնանային զարթոնքը տոնելու մեջ էր:

1.6. Համբարձման տոն

Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր երևաց աշակերտներին, խոսեց Աստծո արքայության մասին: Քառասուներորդ օրը նրանց հետ Ձիթենյաց լեռը բարձրացավ, վերջին պատգամները տվեց սիրելի աշակերտներին, ապա ձեռքերը դեպի երկինք տարածեց, օրհնեց նրանց և լեռան գագաթից սկսեց համբառնալ երկինք: Ծուտով մի լուսավոր ամպ իջավ և ծածկեց նրան առաքյալների տեսողությունից: Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց և պայմանավորված լինելով Զատիկով, բնականաբար, այն միշտ տոնվում է հինգշաբթի: Առնելով մարդկային մեր բնությունը՝ Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց մարդկանց: Մկրտելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին: Եթե Զատկի տոնին առանձնանում, զատվում են բնության գույները, ավարտվում ցանքի աշխատանքները, ապա Համբարձմանն ակնկալվում

է ցանված բերքի աճն ու փթթումը: Այդ նպատակով ժողովուրդը դուրս է գալիս դաշտերը և երգ ու պարով, ուրախություններով սիրաշահում Մայր բնությանը: Համբարձումը բնության բեղունության, բուսականության աճի տոն է: Այն համընկնում է գարնանային աշխատանքների ավարտի հետ, այսինքն՝ այն պահի, երբ երկրագործն, իրենից կախված ամեն ինչ անելուց հետո, հայացքը վեր է պարզում և Աստծուց ու բնությունից ակնկալում հատուցում: Տոնի մյուս կարևոր խորհուրդը. այդ օրն արգելվում է արյուն հեղել՝ կենդանու զոհ մատուցել:

1.7. Պայծառակերպության տոն

Զատիկին հաջորդ 14-րդ կիրակի օրը մեր Եկեղեցին տոնում է Պայծառակերպության տոնը, որը ժողովրդին մեջ հայտնի է «Վարդավառ» անվամբ: Այդ օրը Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Աստվածորդու դեմքը փայլեց՝ ինչպես արեգակ, զգեստները շողարձակեցին՝ ինչպես լույսը: Հանկարծ առաքյալներին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, և ամպից լսվեց մի ձայն, որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեք: Եկեղեցական մեկնաբանությամբ Քրիստոսն է նմանեցվում վարդի, ու եթե մինչև ի յայլակերպություն որպէս թէ վարդ ի կոկոնի էր, եւ յայլակերպիլն՝ ի թաբօր՝ իբր թէ վարդ վառեցաւե /Տ. Թորգոմ պատրիարք/: Վարդավառ բառը տարբեր իմաստներով է ստուգաբանվում, որոնք բոլորն էլ բնութագրում են տոնը, ինչպես նաև՝ մատնանշում դրա խորհուրդները: Մի տարբերակով, վարդավառը բառը կազմված է վարդ-ջուր և վարդ-սրսկել, լվանալ արմատներից, նշանակում է ջրցանություն, որը կազմում է տոնական արարողակարգի գլխավոր մասը:

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ և ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1.Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողն ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում են նորը: Երեխան իր գործողության բոլոր տեսակներին զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով: Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նապապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, կտրելու և տարբեր ծիսական պարագաներ պատրաստելու: Այս ընթացքում խոսում են ծեսի մասին երեխաները: Երեխաները կարող են հորինել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել այն, ինչ իրենց հարազատ է: Այս ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքի վրա, նրա հուզական և մտավոր զարգացման վրա:

2.2. Հետազոտական աշխատանք

Նախքան հետազոտական խնդիրներին անդրադառնալը՝ նշեմ, որ իմ կողմից հետազոտվել են Ավագ խմբի երեխաները: Պարապմունքը դիտարկում էր պարտեզի տնօրենը:

Խումբ. Ավագ խումբ

Երեխաների թվաքանակը – 30

Թեման. Չարխափան

Անհրաժեշտ նյութերը – ընկույզ, թել, սոսինձ, ծառի ճյուղ

Նպատակը.

- Ծանոթացնել ազգայի ծեսի հետ:
- Զևավորել գեղեցիկը գնահատելու կարողունակություն:
- Զևավորել հետաքրքրություն ազգային ծեսերի, երաժշտության, նկատմամբ:
- Զարգացնել սեփական հույզերը, զգացմունքները, տպավորությունները արտահայտելու հմտություն և կարողություն:

Խնդիրները. Զարգացնել խոսքը, սովորեցնել երեխային արտահայտել իր տպավորությունները, սովորացնել հասկանալ ու գնահատել ազգային մշակույթը:

Վերջնարդյունքներ . Պարապմունքի վերջում երեխան կկարողանա.

1. Պատրաստել «չարխափան».
2. Պատմել ազգային ծեսի մասին .
3. Արտահայտել իր հույզերը.
4. Արտահայտել իր տպավորությունները պարապմունքից:

Ընթացքի նկարագրություն

Խթանում. Պարապմունքը սկսում եմ ակտիվացնող վարժությունով: Ցույց տալով ընկույզը, թելը, ծառի ճյուղը, սոսինձը և հարցնում, թե ինչի՞ համար կարելի է օգտագործել այս առարկաները: Երեխաների պատասխանները լսելուց հետո ասում եմ, որ այս բոլորը առարկանները հնում օգտագործել են «Չարխափան» պատրաստելու համար:

Իմաստի ընկալում. Բացատրում եմ, թե ինչ է ավանդույթը, ազգային ծեսը, թե երբ են պատրաստել «Չարխափանը»: Չարխափանը պատրաստում են Նոր տարվա նախորեին և ըստ ավանդույթի նա դուրս է հանում չար ուժերին:

Վերցնում ենք ընկույզի կեղևները, 20-25սմ երկարությամբ թելեր: Դնում ենք թելը ընկույզի կեղևի և սոսնձում ենք իրար: Մի քանի ընկույզներ միացնելով ստանում ենք «Չարխափան»: Չրխկացնելով այն խափանում է չարը:

Կշռադատում. Հարցերի օգնությամբ պարզել երեխաների ընկալելու աստիճանը:

* Ի՞նչ է ավանդույթը:

* Ինչի՞ց են պատրաստում չարխափանը:

* Ինչի՞ համար են օգտագործում չարխափանը:

Պատրաստելու ընթացքում ֆիզկուլտ դադար ենք տալիս: Երեխաներին ազգային երաժշտության ներքո խաղում են ընկույզներով խաղը: Երեխաներին բաժանում եմ 2 խմբի: Յուրաքանչյուր երեխա ձեռքի ընկույզը նետում է իր թիմի զամբյուղի մեջ: Հաղթում է այն թիմը, ով շատ ընկույզ կունենա զամբյուղում:

Նկար 1,2. Չարխափանի պատրաստում:

Նկար 3,4,5,6. Ծառի զարդարումը չարխափանով:

Պարապմունքից հետո մանկապարտեզի տնօրենը ներկայացրեց իր դիտարկումը:

Մեթոդիստը պարապմունքի արդյունքում հասավ իր նպատակին: Սաների մոտ զարգացավ ազգային ծեսերի նկատմամբ հետաքրքրությունը, նրանք ուրախությամբ և ոգևորությամբ էին պատրաստում ,,չարխափանը,, և կախում ծառից: Թեման արդիական է և կարևոր, ազգային ծեսերը և ավանդույթները պահելու խնդիր ունենք, որի իրագործմանն էր ուղղված այս պարապմունքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով ազգային տոների, ծեսերի կազմակերպման գործընթացը երեխաների դաստիարակության, կրթության բաղադրիչներից է: Ազգային տոների մասին մեկնաբանությունները, դրանց երեխաներին մասնակից դարձնելը լավագույնս նպաստում են երեխայի գիտելիքների ձեռքբերմանը, դրանց ամրապնդմանը, ազգային ծեսերի հանդեպ հետաքրքրության, սիրո դրսևորմանը:

Ազգային ծեսերն ու տոները, որոնք դարերի կենսագրություն ունեն, սիրված են մարդկանց կողմից: Դրանցով երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը դառնում է հետաքրքիր ու բովանդակալից:

Ժողովրդական տոների ու ծեսերի կազմակերպումը նախադպրոցական տարիքի երեխաների համար ունի իր առանձնահատկությունը: Այդ ամենը երեխային մատուցվում է խաղերի միջոցով: Դրանք լավագույնս նպաստում են երեխաների երևակայության զարգացմանը: Ծեսերն ու տոները՝ իրենց բնորոշ սովորույթներով, իրերով, ուտելիքների տեսակներով, ներազդում են երեխայի հուզական ներաշխարհի վրա: Տպավորությունները մնում են նրանց հիշողության մեջ՝ նպաստելով երևակայության, խոսքի, հույզերի հարստացմանը:

Տոների մասին տեղեությունները շատ կարևոր են՝ երեխային դեռևս մանկուց ազգային տոների մասին ինֆորմացիա տրամադրելու, դրանց նկատմամբ հետաքրքրություն և սեր առաջացնելու համար: Երեխաների՝ տոների վերաբերյալ ունեցած տեղեկությունները, նրանց դարձնում են ավելի վստահ, ավելի հետաքրքրասեր ու ոչ անտարբեր մեր անցյալի արժեքների հանդեպ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հր. Խառատյան «Ազգային ծեսեր, տոներ», (Երևան 2005թ),360էջ

2.Գ. Մանուչարյան, Ժ. Ադամյան, «Ազգային ծեսեր, տոները նախակրթարանում», դիպլոմային նախագիծ

3. Ազգային տոներ – Հոդված

4. Տյառնընդառաջ –qahana.am

5. Վահան քահանա Մելիքյան, «Օրվա խորհուրդը», էջ 90